ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/32

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի 27.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.02.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Բողոքաբեր), հիմք ընդունելով «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերը, սահմանված կարգով հայտ է ներկայացրել թիվ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար:

Տվյալ մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել նաև «Սիլ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը և «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Գնահատող հանձնաժողովը թիվ 4 արձանագրությամբ ճանաչել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը որպես թիվ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով մրցույթի Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.4 ենթակետին չհամապատասխանող:

31.01.2018թ. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Պատասխանողին՝ պնդելով, որ գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը կայացվել է ՀՀ օրենսդրության մի շարք դրույթների խախտմամբ և պահանջել է դադարեցնել ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 1.6 և 1.7 կետերով կայացված որոշումները:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն հայց է ներկայացրել Երևան քաղաքի դատարան 16.02.2018թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/13 որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Մինչդեռ, «ԵՊՀ» հիմնադրամը անտեսելով այս փաստը, 21.02.2018թ. կայացրել է թիվ 5 արձանագրությունը, որով որոշել է շարունակել բանակցությունները «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հետ և ժամանակ է տրամադրել փաստաթղթեր ներկայացնելու համար:

Ստեղծված իրավիճակը խախտում է բողոքաբերի ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, թիվ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով ընթացակարգի շարունակման և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին հաղթող ճանաչելու դեպքում, Բողոքաբերի 16.02.2018թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/13 որոշումը անվավեր ճանաչելու հայցապահանջը դառնում է իմաստազրկված, քանի որ նույնիսկ դատական գործը շահելու պայմաններում վերջինս զրկված կլինի մրցույթին մասնակցելուց, քանի որ մրցույթն այդ պահին կլինի արդեն ավարտված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրության վերոհիշյալ դրույթներով, խնդրում ենք պարտավորեցնել «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապիովագրության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կասեցնել 21.02.2018թ. կայացված թիվ 1.3 կետով սահմանված որոշման կատարումը, ինչպես նաև կասեցնել թիվ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հայտարարված ամբողջ հրատապ բաց մրցույթի անցկացումը մինչև 16.02.2018թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/13 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի վերջնական դատական քննությունը»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Արման Սարգսյանը և Ալեքսանդր Մկրտչյանը:

2. <u>«ԵՊՀ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«ԵՊՀ» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.03.2018թ. թիվ 01/216 գրությամբ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 27.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««ԵՊՀ» հիմնադրամի «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժովը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/13 ծածկագրով բողոքի վերաբերյալ կայացրած որոշման հիման վրա, թիվ 5 արձանագրությամբ 24.01.2018թ. ժ 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.6 և 1.7 ենթակետերով կայացված որոշումները հայտարարել էր չկայացած և երրորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությունից՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ից պահանջել էր ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով սահմանված փաստաթղթերը մինչև ս.թ. փետրվարի 26-ը, ժ.10:00-ն, ինչպես նաև գնի նվազեցման նպատակով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հետ վարել բանակցություններ, քանի որ նարկայացրած գնային առաջարկը գերազանցում է հոգաբարձուների խորհրդի նիստում՝ մրցույթի արդյունքում հաստատված նախահաշվային գինը:

Միաժամանակ, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն դատական վարույթ է սկսել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/13 որոշման դեմ»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ալլա Մակարյանը:

3. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ԳԲԽ-ԷՍ-2018/32 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 02.03.2018թ. Խորհրդին ուղղված միջնորդությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 27.02.2018թ. «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/32 բողոքն առնչվում է կամ կարող է առնչվել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) մասնակցությամբ «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթին, որի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից 21.02.2018թ. կայացված թիվ 5 արձանագրությամբ որոշում է կայացվել հնարավորություն ընձեռել Ընկերությանը ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր՝ «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայությունների» ձեռքբերման վերաբերյալ ապահովագրական պայմանագիր կնքելու համար, Ընկերությունը գտնում է, որ Բողոքի քննության արդյունքում կայացվելիք ակտը կարող է անդրադառնալ Ընկերության իրավունքների և օրինական շահերի վրա, ինչպես նաև ստեղծել, կասեցնել կամ դադարեցնել Ընկերության շահերին անմիջականորեն առնչվող իրավահարաբերություններ, ուստի միջնորդում ենք՝ թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/32 բողոքի քննության գործընթացում որպես շահագրգիռ կողմ ներգրավել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին՝ ՀՀ օրենսդրությամբ ահմանված իրավունքների և օրինական շահերի պատշաճ իրացումն ապահովելու համար»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Մանե Մարտիրոսյանը:

4. ԳԲԽ-ԷՍ-2018/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն ուսումնասիրել է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ -ի կողմից 27.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի N 5 արձանագրությունը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 16.02.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 որոշումը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից Երևան քաղաքի դատարանին ներկայացված՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 16.02.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 որոշումը անվավեր ճանաչելու մասին հայցադիմումը, Պատվիրատուի 02.03.2018թ. թիվ 01/216 գրությամբ ներկայացված դիրքորոշումը.

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 16.02.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 որոշմամբ արձանագրված փաստական հանգամանքները՝ պարզեց հետևյալը.

«ԵՊՀ» հիմնադրամը կազմակերպել է ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրած ընդհանուր գնային առաջարկը կազմել է 157,200,000 ՀՀ դրամ:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի 5-րդ կետով սահմանվել է, որ նույն երաշխիքը գործում է մինչև 10.05.2018թ. ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետով որոշել է մերժել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված երաշխիքի ժամկետը գերազանցում է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրը, ինչը չի համապատասխանում Ընթացակարգի Հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 նթակետով սահմանված պահանջին:

Նույն արձանագրության 1-ին կետի 1.7 ենթակետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթը հայտարարել չկայացած՝ որպես հիմք մատնանշելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ

հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 31.01.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով պահանջել է դադարցնել ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի N 4 արձանագրության 1-ին կետի 1.6 և 1.7 ենթակետերով կայացրած որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 16.02.2018թ. ընդունած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 որոշմամբ բավարարել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի բողոքը: Խորհուրդը որոշել է.

1. Պարտավորեցնել ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետով կայացված՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետի 1.7 ենթակետով կայացված՝ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Ի կատարումն Խորհրդի 16.02.2018թ. ընդունած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 որոշման՝ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով որոշել է ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի N 4 արձանագրության 1-ին կետի 1.6 և 1.7 ենթակետերով կայացրած որոշումները հայտարարել չկայացած, իսկ նույն կետի 1.3 ենթակետով որոշել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ից պահանջել ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով սահմանված փաստաթղթերը մինչև 26.02.2018թ., ինչպես նաև գնի նվազեցման նպատակով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հետ վարել բանակցություններ, քանի որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցել է Ընթացակարգի նախահաշվային գինը:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն 19.02.2018թ. Երևան քաղաքի դատարանին ներկայացրել է հայցադիմում՝ խնդրելով անվավեր ճանաչել 16.02.2018թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 որոշումը, միջնորդելով որպես հայցի ապահովում՝ արգելել «ԵՊՀ» հիմնադրամին թիվ ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով մրցույթի շրջանակներում կատարել

որևէ գործողություն՝ մինչև նույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

• 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի պատճառաբանված որոշմամբ նույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

• 50-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ խորհուրդը հաշվառում է խորհրդի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ընդհանուր ժողովի 21.04.2017թ. N 1 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության» կարգի 52-րդ կետի համաձայն՝ Խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվությունը այդ որոշման հրապարակման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գրավոր ներկայացնում է Խորհրդին: Խորհրդի որոշման կատարման վերաբերյալ տեղեկատվությունը Խորհրդի կողմից այն ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 27.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի պահանջն ուղղված է Խորհրդի

կողմից 16.02.2018թ. ընդունած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 որոշումից բխող՝ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումների կատարումը կասեցնելուն:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը N 4 արձանագրության 1-ին կետի 1.6 և 1.7 ենթակետերով կայացրած որոշումները դադարեցնելով գործել է իրավաչափ՝ ապահովելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 16.02.2018թ. ընդունած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/13 իրավապարտադիր որոշման կատարումը, որպիսի պահանջը նախատեսված է օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով:

Խորհուրդը գտնում է նաև, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն՝ հաշվի առնելով, որ իր շահերը կարող էին խախտվել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ուներ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը Խորհուրդ ներկայացնել համանման բողոք:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 27.02.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**